

### ԱՐՄԱՆ ՍԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

## ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Հոդվածում քննության են առնվում մարդու առողջության պահպանման իրավունքի պատմատեսական հիմնախնդիրները: Հոդվածի շրջանակներում ուրույն տեսակետներ են ներկայացվում մարդու առողջության պահպանման իրավունքի գիտապրակտիկ սահմանման վերաբերյալ:

*Հիմնաբառեր-* առողջության պահպանման իրավունք, առողջության իրավունք, առողջության պաշտպանության իրավունք, «առողջության խնամքի իրավունք», «առողջություն»:

Առողջապահական համակարգում պետության իրավական քաղաքականության հարցի ուսումնասիրությունը պետք է սկսել այն հարցի պատասխանից, թե արդյո՞ք մարդն ունի առողջության իրավունք և ինչու՞մ է կայանում նրա հիմնական բովանդակությունը: Այսպիսով, մարդու առողջության պահպանման իրավունքի անմիջական օբյեկտ է ծառայում «առողջության» ֆենոմենը, որի սահմանումը ժամանակակից գրականության մեջ կրում է տարբերակված բնույթ: Հետևաբար, կարելի է խոսել ոչ միայն ֆիզիկական կամ ֆիզիկական և հոգեկան առողջության մասին, այլ, նույնիսկ, սոցիալական բարեկեցության մասին:

Ժամանակի ընթացքում առողջության հայեցակարգը աստիճանաբար ընդլայնվում էր: Հռոմեացիների համար դա արդեն ընդգրկում էր հոգեկան առողջությունն ու բարեկեցությունը՝ «ut sit mens sana in corpore sano»<sup>1</sup>: Այնուամենայնիվ, ավելի ուշ, հռոմեացիները ընդունեցին «ֆիզիկական առողջություն» հասկացության մասին հունական հայեցակարգը, այսինքն՝ վարվելակերպ առողջ մարմնին, այլ ոչ թե ոգուն:

Քրիստոնեության գալուստով՝ առողջության հայեցակարգի բովանդակությունը հերթական անգամ կտրուկ փոխվում է: Այդ ժամանակ առողջությունը ճանաչված էր որպես ավելի մեծ չափով կապված հոգևոր ոլորտին, քան՝ ֆիզիկական: Ականավոր գիտնական Հենրի Սիգերիստը նշում է, որ նոր դարաշրջանում. «...գլխավորը դարձել է ոգին: Առանց Քրիստոսի ցանկացածը հիվանդ է»: Քրիստոնեական աշխարհայացքի սկզբունքային տարբերությանը հունահռոմեական հայեցակարգերից նպաստեց նաև առողջության ճանաչումը որպես արժեք, որը պատկանում էր ոչ թե ընտրյալներին, այլ՝ բոլոր մարդկանց, այսինքն՝ «առողջություն» հասկացությունը դարձավ ավելի ժողովրդավարական: Այն «ֆիզիկական և հոգեկան առողջության» հնագույն գաղափարներից շատ ավելի լայնարձակ էր: Ըստ Սիգերիստի. «...առողջությունը ոչ միայն հիվանդությունների բացակայությունն է, այլ

որոշակի դրականը, կյանքի ուրախությունը, կյանքի ընթացքում մարդու վրա դրված ամբողջ պատասխանատվության ընդունումը անձի կողմից»:

Կ. Կասար նշում է. «Առողջությունը կենսական մի վիճակ է, այն չի կարող տալ, խլել կամ վնասել մեկ այլ մարդը, այլ դա կարող է կատարվել միայն անուղղակի ճանապարհով: Նաև իմաստ չունի առողջության իրավունքի հռչակումը, ինչպես որ անիմաստ է հռչակել մարդու իմաստության կամ խիզախության իրավունքը: Այս հոգևոր և ֆիզիկական որակները յուրաքանչյուրից, ով ձգտում է դրանց, պահանջում են շնորհի, մշտական ուշադրություն և ջանքեր, ինչպես նաև կարգապահություն: Սեփական առողջության հանդեպ պատասխանատվությունը դնել ուրիշի վրա պարզապես անազնիվ կլիներ, դա կնշանակեր պարտադրել նրան այն պարտականությունները, որոնք անհնար է իրականացնել»<sup>3</sup>:

Ռ. Էբբինգի կարծիքով՝ «առողջության խնամքի իրավունք» տերմինը ավելի իրատեսական է: «Առողջապահական համակարգը պետք է լինի անձի տրամադրության տակ այն մակարդակին, որքանով դա հնարավոր է, և, այդ թվում, համակարգի պարտավորությունները անձի նկատմամբ պետք է լինեն նորմալ հնարավորությունների շրջանակներում: Ի տարբերություն առողջության իրավունքի, առողջության խնամքի իրավունքը կարող է արդարացիորեն պահանջվել անձի կողմից, քանի որ գոյություն ունի պետության կողմից մի իրավական պարտականություն՝ բուժօգնության տրամադրման տեսքով»<sup>4</sup>:

Հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Բուդահերեյնի դիրքորոշումը, ով կարծում է, որ «առողջության իրավունք» կատեգորիայի հայեցակարգը կառուցված է Արևմտյան աշխարհի գաղափարների վրա և չի կիրառվում այնպիսի երկրի վրա, ինչպիսին է, օրինակ՝ Մարոկկոն<sup>5</sup>: Իր հայեցակարգը հաստատելու համար նա մեջբերում է հետևյալ փաստարկները: Նախ, Մարոկկոյի զարգացման մակարդակը դեռևս թույլ չի տալիս այս երկրին

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

երաշխավորել սեփական քաղաքացիներին այդպիսի իրավունք և համապատասխան միջոցներ ձեռնարկել: Երկրորդ՝ «առողջության իրավունք» հայեցակարգը չափազանց լայնատարած է, ինչը բույլ է տալիս ներառել ասպեկտներ, որոնք դուրս են առողջության պահպանման շրջանակներից և ավելի կապված են մարդկանց սոցիալական բարեկեցության հետ: Դա նշանակում է աջակցություն այս իրավունքին սոցիալական անվտանգություն և օգնություն ապահովող պետական ինստիտուտների կողմից:

Տոբեար քարոզում է պաշտպանություն «առողջության իրավունք» տերմինի գործածման իրավասությունը, ով իր «Առողջության իրավունք. տեսություն և պրակտիկա» աշխատությունում մեջբերում է հետևյալ երեք հիմնական փաստարկները՝

1) «Առողջության իրավունք» տերմինը համարվում է լավագույնը՝ միջազգային փաստաթղթերի և մարդու իրավունքների համաձայնագրերի համապատասխանության տեսակետից «առողջության իրավունք» արտահայտությունը այն «առողջության մակարդակի առավելագույն հասանելի իրավունքին», որի մասին նշված տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Միջազգային համաձայնագրի (խարտիայի) 12-րդ հոդվածում (այսուհետ՝ ՏՄՄՄՀ) պայմանագրերից ամենահայտնին, որտեղ ասվում է առողջության իրավունքի մասին՝ «Ֆիզիկական և հոգեկան բարեկեցության առավելագույն հասանելի մակարդակի իրավունքը» ավելի հեշտ է կրճատել «առողջության իրավունք»-ով, քան «առողջության խնամքի իրավունք»-ով: Կարևոր է նաև, որ ՏՄՄՄՀ-ի 12-րդ հոդվածում և նման փաստաթղթերում տեղ գտած միջոցառումները վերաբերվում են ոչ միայն առողջության պահպանման, այլ նաև մի շարք այլ միջոցառումներին՝ կապված հանրային առողջության հետ, որոնք պետք է ձեռնարկվեն պետությունների կողմից: Այդ պատճառով առողջության խնամքի իրավունքն տերմինի ավելի նեղ կիրառումը ի վիճակի չէ արտացոլել պահանջվող միջոցառումների լայն շրջանակը:

2) «Առողջության իրավունք» տերմինը հաճախ գործածվում է պայմանագրերի ավելի ամբողջական և մանրամասն տեքստերում: Նման հղումների օգտագործումը բավականին տարածված պրակտիկա է մարդու իրավունքների վերաբերյալ քննարկումներում, իսկ այնպիսի տերմինները, ինչպիսիք են՝ «կյանքի իրավունքը», «անձնական կյանքի իրավունքը», «արդարադատության իրավունքը», «կացության իրավունքը» ձեռք բերեցին ավելի պարզ և գործնական իմաստ՝

3) «Առողջության իրավունք» տերմինը օգնում

է գիտակցել, որ խոսքը ոչ միայն առողջության պահպանման, այլ նաև մի շարք պայմանների մասին է, առանց որոնց հնարավոր չէ առողջությունը, օրինակ՝ հասանելիություն մաքուր խմելու ջրին և առողջ բնապահպանական միջավայրին: Մաքուր խմելու ջուրը և բավարար սանիտարական պայմանները անհրաժեշտ են մարդու առողջության համար: Միևնույն ժամանակ, այս ասպեկտները չեն շոշափում «առողջության պահպանման իրավունք» տերմինը: Առողջության իրավունքը չի ներառում պարտադիր յուրաքանչյուր մարդու առողջությունը: Առողջության իրավունքը դա իրավունք չէ առողջ լինելու. այն նաև իրավունք չի վերագրում օգտագործել բժշկության բոլոր ձեռքբերումները: Այս իրավունքը երաշխավորում է հասանելիություն որոշակի քանակի ծառայությունների, պահանջների և ազատության՝ կապված բժշկության և առողջության հետ: Այն նաև հաշվի է առնում այս կամ այն պետության կարողությունները և իր քաղաքացիների կարիքները:

Թվում է, որ վերոնշյալի հիման վրա, «առողջության իրավունք» և «առողջության պահպանման իրավունք» հարաբերությունների հարցը վիճելի է, հետևաբար, Բ.Տոբեսի ոչ բոլոր փաստարկներն են համոզիչ: Այնուամենայնիվ, դրանք հաստատում են իրենց հստակ օրենսդրական սահմանազատումների և իմաստալից որոշման նպատակահարմարությունը: Արդյունքում, հարկ է նշել, որ, բացառությամբ որոշ տեսաբանների, մնացածը չեն անցկացնում տերմինաբանական զուգակցում, այլ գործածում են կամ «առողջության իրավունք», կամ «առողջության պահպանման իրավունք» և «առողջության պաշտպանության իրավունք» հասկացությունները:

Մեր կարծիքով, անհիմն է համարվում մի իմաստային նշանակություն տալը նման բազմատեսակ կատեգորիաներին, քանի որ տարբերակել նրանց հնարավոր է: Միևնույն ժամանակ, որպես տարբերակման հիմք հարկ է ընդունել այդ իրավունքների բնույթը և, համապատասխանաբար, մարդկային կյանքի ոլորտը, որոնց հետ նրանք առնչվում են: Դրա հիման վրա որոշենք, թե իրավունքների որ կատեգորիային (սերնդի) են դրանք դասակարգվում: Այսպիսով, «առողջության իրավունք»-ը ոչ նյութական բարիք է, բնորոշ է մարդուն ի ծնե, որը կարող է դիտվել որպես մարդու անհատական (քաղաքացիական) իրավունք: Այն ենթադրում է պետության չմիջամտումը տվյալ անձնական ոլորտ, որի հիման վրա ակնհայտ է, որ իր բնույթով առողջության իրավունքը կարելի է վերագրել առաջին սերնդի իրավունքներին:

<sup>1</sup> «Առողջ մարմնում առողջ ոգի» <http://medbasis.ru/mens-sana-in-corpore-sano>

<sup>2</sup> Sigerist H.E. Medicine and Human Welfare, New Haven. London: Yale University Press / Oxford University Press, 1941.

<sup>3</sup> Boyle J. M., Jr., The Concept of Health and the Right to Health, Social Thought, Summer, Vol. 3, 1977, p 5-6.

<sup>4</sup> Abbing. R. H.D.C., International Organizations in Europe and the Right to Health Care, Deventer: Kluwer, 1979, p 105.

<sup>5</sup> Тобес Б. Право на здоровье. Теория и практика. М.: Устойчивый мир, 2001, с 40.

<sup>6</sup> Тобес Б. Право на здоровье. Теория и практика. М.: Устойчивый мир, 2001, с 47.

<sup>7</sup> <http://base.safework.ru/iloenc?doc&nd=%20857400104&nh=0&ssect=1>

<sup>8</sup> Mahoney K.E., Mahoney P. Human Rights in the Twenty-first Century. Deventer Kluwer., 1993, p 485.

Арман Мелкоян

Соискатель академии государственного управления РА

#### РЕЗЮМЕ

##### *Право на охрану здоровья: исторические и теоретические аспекты*

В статье рассматриваются исторические и теоретические вопросы прав защиты здоровья человека. В рамках статьи излагаются конкретные взгляды на научно обоснованное определение права на здравоохранение.

**Ключевые слова:** право на охрану здоровья, право на здоровье, право защиты здоровья, “право на здравоохранение”, “здоровье”.

Arman Melqonyan

Applicant at the Public Administration  
Academy of the Republic of Armenia

#### SUMMARY

##### *The right to health care: historical and theoretical aspects*

In article historical and theoretical questions of human rights on health care are considered. Within the framework of the article the concrete points of views on evidence-based determination of human right on health care are represented.

**Key words:** right to health care, right on health, right of health protection, “right on health care”, “health”.